

ՆԻԻԹԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1834- Վերայ էջմիածնի յետին միաբան Բարսեղ նուսաս եպիսկոպոսը, Մինաս եպիսկոպոսը և Ստեփանոս եպիսկոպոս Արղուժեանցը 1834 թուի յուլիսի 28 ին Տփլիսից № 326 թղթով հետևեալն են գրում Յովհաննէս Կարսեցի կաթողիկոսին Ներսիսեան Հոգևոր Դպրոցի վիճակի մասին. —

«Տփլիսը մայրաքաղաք է և յայսկոյս Կովկասու բոլոր քաղաքների սիրտ և կենդրոն. ապա եթէ մայրաքաղաք է և ամենի սիրտ ու կենդրոնը, ուրեմն նորանում ամեն ինչ պէտք է վայելեալան, երևելի լինի և հաւանելու արժանի, նորա մէջ են բնակուում երկրիս բոլոր գլխաւոր կառավարիչները թէ զինուորական և թէ քաղաքական. եթէ այսպէս է, ուրեմն և տեղւոյս ուսումնարանները պէտք է վայելանան, ինչպիսին որ վայել է քաղաքի և նորա բնակիչների վայելեալանութեան, պէտք է օրէցօր արդիւնաւորուին, պայծառանան, գեղապանծ ձև և կառավարութիւն ստանան, և ոչ թէ ժամ առ ժամ անշքանան և ընկնին, խոնարհին, անբարեկարգութեան և անվայելութեան տիպ և տեսարան դառնան, որ միշտ նախատում է Ռուսաց Տէրութիւնը: Ուրիշ նշանաւոր ուսումնարանների թւում գտնուում է այստեղ և Տփլիսի Հայոց ուսումնարանը, քաղաքիս սրտում կառուցած, որի վերայ է Տփլիսի բազմութեան աչքը և նորան են միայն ճանաչում Հայոց ազգի լուսաւորութեան տեղը և յայսկոյս Կովկասում ազգի փառքի ու պայծառութեան տեսարանը, որ պէտք է հետզհետէ արեգակի նման արձակէ լուսի ճառագայթները Վրաստանի շրջակայ հայերի մէջ, մանաւանդ Հայաստան աշխարհում, բայց սակայն Տրփլիս մայրաքաղաքի Հայոց այս մայր ուսումնարանը արժատիս մայրաքաղաքի Հայոց այս մայր ուսումնարանը արժատու պատճառով օրէցօր ընդհակառակը նսեմանում է, նորա փառքը և մեծ վայելութիւնն ընկնում է և ժամ առ ժամ սպասում է բոլորովին փակման և խանգարուելուն յանպատուութիւն Հայ ազգի, ազգայիների, եկեղեցու և եկեղեցականների: Տէրութեան ուսումնարանները ծաղկում են և

բազմարդիւն պաշարերոււմ են սյստեղ, մանաւանդ բարձրանում է ռուսաց արբեպիսկոպոսի հոգեւոր սեմինարիայն գեղատեսիլ փառաւորութեան և արգասաւորութեան ծայրը, նոցա հոգեւորականների զաւակները ազատաբայլ ճեմում են ուսմանց մէջ և ուսումնաւարտելուց յետ ընտրութեամբ արժանի են լինում բաճանայութեան և վարդապետութեան, իսկ մեր հոգեւորականների որդիքը պարապ շրջում են փողոցներում և հրապարակներում, մնում են անուսում, և բաճանայանում են անուսումնաւոր, բաճանայագործում են անուսումնաւոր և նոցա ամեն բանը անուսում է և անբաղաւաճ, որով մեծ ամօթ են բերում ազգի և հոգեւոր կառավարիչների անուան, և սաստիկ արատաւորում են նոցա անունը, որոնք չեն հոգում ազգի և նորա ազգայլոյս ուսումնարանի բարւոք վիճակի մասին, տեղիք են տալիս իրաւացի բամբասելու հոգեւորականների թուլութիւնը և նոցա անփութութիւնը ազգի լուսաւորութեան վերաբերմամբ, որով աւելի ևս սառչում է ազգի ջերմեռանդութիւնը և ցամաքում է նոցա սէրը դէպի ազգի հոգեւորականները:

«Ռուսաց սեմինարիայն կառուցած էր ռուսաց նախորդ արբեպիսկոպոսներից, այլ նոցա հանգուցեալ հոգեւոյս Մովսէս արբեպիսկոպոսը Տփլիս գալով՝ եկեղեցիների դրամը չինայեց սեմինարիան առաւել պայծառացնելու, մեծ ծախքով լատին լեզուի վարժապետ բերել տուեց և այն էլ սահմանեց իր արբեպիսկոպոսական վարժարանում, ռուսաց, վրաց, և զանազան հարկաւոր լեզուների դպրութեանց հետ միասին, որով ազգասէրի անուն ստացաւ և սորանից էլ աւելի վայելչացրեց իւր այն ուսումնարանը տեսակ տեսակ մակացութիւններով իւր անուան պարծանքի համար: Այսպէս էլ եթէ ձեր Տէրութիւնը բարեհաճի վայելչազարդել Տրփլիսի հայոց ուսումնարանը բաղաբիս եկեղեցիների արդիւնքներով, որոնք պատկանում են ս. Էջմիածնի Աթոռին, այն ժամանակ՝ ո՞ր լեզուն քմբին չպէտք է կպչի որ չգովէ այդպիսի վայելչութեանց հիմնադրին, ո՞ր աչքը կկուրանայ ու չի տեսնի այդպիսի ազգասիրութիւնը և ո՞ր անձը անիրաւ կգտնուի ու չի տեսնի այնպիսի ազգասիրական ճիգն ու չի խոստովանի, որ այդ անողը արժանի է գերագոյն գովութեան և լիասիրտ ու լիաբերան շնորհակալութեան իւր ազ-

գասիրութեանց ու սխրագործութեանց համար, արդարեւ ոչ որ չի գտնուի ուրեւիցէ, որ ուրանայ կատարուած ճշմարտութիւնը և չխոստովանուի մարդոց առաջ: Լսում ենք ճանապարհորդներից, որ Ներսէս սրբազանը հիմնարկել է նորանոր շինուածներ և ազգաշէն ուսումնարաններ ազգի մանուկների և իւր վիճակի եկեղեցու ուխտի կրթութեան համար. էլ չենք խօսում Մոսկուայի վեհազնեայց ազգաշէն ուսումնարանի մասին, որի քաղցրահամ պտուղները հասան Տիփլիս և Հայաստան, իսկ Վրաստանի վիճակի այս ուսումնարանը մնում է խաւար իւր ուխտի մանուկների համար, որոնք զբաղւում են հոգեւոր կոչման անպատուաբեր զանազան արհեստներով: Այս բոլորի մասին անցեալները հարցրեց Վրաստանի լուսահոգի եկզարեւը, երբ գնացել էինք նորա ուսումնարանի աշակերտների հարցաքննութեան, թէ ունի՞ք «հոգեւորական վիճակ», երբ պատասխան տուինք թէ ունինք՝ իսկայն ասաց. քաւ լիցի, չունիք, որովհետեւ քահանաների որդեաց թողնում էք որ գոեհանան, և գոեհանների զաւակներին բերում էք քահանայացւում:

Քաջ յայտնի է Ձեր վեհափառութեան Պօլսի ամիրաների ազգասիրութիւնը և նոցա ու Վարապետ Պատրիարքի ինչ ինչ կարգադրութիւնները, որի տպած ցուցակից երեւում է, որ քերականութիւն չգիտցողները սարկաւազ չպիտի ձեռնադրուին և ճարտասանութիւնը ու այլ ուսմունքներ չսովորածները քահանայ կամ վարդապետ. եթէ այնպիսի մի մասնաւոր անձ, լոկ անուամբ միայն պատրիարք, այսպիսի կարգադրութիւն է անում իւր վիճակի ազգայինների սիրտը գոնէ գրաւելու, ինչքան ուրեմն ընդհանրական պատրիարքը, որը տէր է ազգի և պատրիարքների պատրիարք է, աւելի մեծամեծ ազգօգուտ գործերի կարող է ձեռնարկել, և այս բոլոր ազգասիրական ձեռնարկութիւնները կարող են գլուխ գալ եկեղեցիների արդիւններով, որոնք անպառ աղբիւրների պէս բղկում են և աղբերանում. բայց Ամենողորմած Տէր, ոչ թէ ասում ենք, որ եկեղեցիների բոլոր արդիւնքը գործածէք ուսումնարանի վերայ, ոչ այլ իւրաքանչիւր եկեղեցու կարողութեան համեմատ մի տասանորդ ծախսուի ուսումնարանի վերայ, օրինակ, եթէ մի եկեղեցի ունի տարեկան 100 թուման եկամուտ, տասը թու-

մանը թող տրուի ուսումնարանին, իսկ մնացեալ իննսուներեք ծախսուի ուրիշ պէտքերի համար, ինչի որ կցան. կաք աղգի և Աթոռի օգտին, մինչև որ հետզհետէ ուսումնարանի արդիւնաւորութեան համար եկեղեցական դատարկ տեղերի վերայ կաւելնան, կշինուին նորանոր օգտաւէտ շինուածներ և ուրիշ մեծամեծ անշարժ կալուածներ, որոնցից կբացուին արդիւնքի անհատ վտակներ, որոնք կբաւականան ուսումնարանի կարիքներին և նորա կառավարութեան և անհոգ կմնայ ձեր Տէրութիւնը, նոյնպէս և եկեղեցական արդիւնքը ազատ կմնան այնպիսի ծախքերից, և այն բոլոր շինուածքների եկամուտները լիովին կյագեցնեն ուսումնարանի կարիքների և պիտոյքների քաղցը, և ինչպէս ուսումնարանը, այսպէս էլ նորա թէ հին և թէ նոր կալուածները ս. Էջմիածնի Աթոռին կմնան: Ներսէս սրբազանի դիտաւորութիւնն ու կամքն էլ այս էր, որ եկեղեցական արդիւնքների օժանդակութեամբ եկեղեցիների դատարկ տեղերը լըցնէ զանազան նոր շինուածներով նոցանով արդիւնքի նոր աղբիւրներ բանալու ինչպէս ուսումնարանի պահպանութեան, այսպէս էլ Առաջնորդարանի և ս. Աթոռի պահպանութեան համար: Այլ մենք սոցանից ոչինչ էլ չանելով՝ դառնում ենք աղգի նախատինք և բամբասում ենք ինչպէս մերազնիներից նոյնպէս և օտարազգիներից, որոնք ասում են, խօսում և լսում, թէ հայոց հոգեւորականները միշտ կռիւում են ժողովրդին, դրամներ ժողովում և չսփռում, հնձում են և չըցնում և լին:

Ամենաողորմած Վեհապետ, այս ամենը համառօտաբար տեղեկացնելով Վեհիգ օծութեան, մեծայղյս ենք, թէ Տէրութիւնդ բաւ կհամարի մեր հոգեւորականների տգիտութիւնը և Տփխիսի հայոց ուսումնարանի անշքութիւնը: Վասնորոյ ամենախոնարհաբար խնդրում ենք վերը յիշած հանգամանքների համաձայն բարեհաճել հրամայել կառավարութեանս որ եկեղեցական արդիւնքներից մի առ ժամանակ տարեցտարի տասանորդ մասն տրուի ուսումնարանին, որ անխնամ մնալով քիչ ժամանակից յետ բոլորովին կոշնջանայ, և այնուհետև նորա արդիւնքները կարգի դնելուց յետ ժողովել նորա մեջ քահանաների և եկեղեցու ժառանգաւորների բոլոր մանուկներին և ամենքին ըստ արժանւոյն կրթել և

այն ժամանակ Ձեր սրբազան Տէրութեան անունը երկնքի
 չափ կը արձրանայ, կփայլի և կգովուի բոլոր երկրիս վերայ,
 իսկ եթէ այս բանին հաճութիւն կտայ Տէրութիւնդ, այն
 ժամանակ լաւ կլինի եթէ ձեր կարգադրութեան մասին ծա-
 նուցանէք և պ. Կոստակային գրելով, թէ ես լսելով որ Տըփ-
 խիսի Հայոց ուսումնարանը ունի պակասութիւն, հրամայե-
 ցի Հոգեւոր Կառավարութեան տալ եկեղեցական արդիւնքնե-
 ցի Հոգեւոր Կառավարութեան տալ եկեղեցական արդիւնքնե-
 րից այսքան ու այսքան: Սորա մասին պ. Կոստակայը շատ
 անգամ ասել է մեզ, թէ ուսումնարանը ազգային է և դուք
 Թոշնոմ էք անխնամ ինչպէս տեսնում եմ, որի մասին առաջ
 էլ յայտնել ենք Տէրութեանդ: Բայց ինչպէս Կոստակա-
 յին, այնպէս էլ մեզ այնպէս կգրէք, թէ այն բոլոր արդիւնքը յո-
 գուտ ուսումնարանի կտնօրինէ Հոգեւոր Կառավարութիւնս
 կամ վիճակաւոր արքեպիսկոպոսը և ոչ թէ կօմիտէտը, որ
 ինչ ուզենայ անէ առանց Կառավարութեանս վերահասու-
 թեան:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒՄԺ ՄԵՐ ՀԻՆ ՄԱՏԵՆԱ- ԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Մեր մատենադարանի Թղթերում գտնուեցան կէս Թերթ
 Թղթի վերայ գրուած հետեւեալ պատմական երկու հա-
 տուածները, որոնց վերջը արտագրողի ձեռքով գրուած է
 այս ծանօթութիւնը. «այս հայոց պատմութեան և Բագ-
 րատունեաց պատմութեան հատուածները բաղուեցաւ մի
 ձեռագրէ, Ղըիմեցի Յակովբ վարդապետին տումարի մեկ-
 նութիւն անուանեալ, որ Քրիստոսի 200 տարուան»:

Պատմութիւն Բագրատունեաց՝ որ յԱնի Թագաւորեաց
 (Թագաւորեցին):

Աշոտ որդի սմբատայ՝ Թագաւորէ Հայոց ամս. Ե. — ՅԼԶ
 Թվականին: 'Ի սորա աւուրս էր Սահակ վարդապետ և Վահ-
 րամ, որ զվերլուծութիւն առական գրեաց և զՅօբայ, և
 զԱւրհնութիւնս որ 'ի գլուխս կանաւնաց, և զտնօրինման գիրք
 մի, և զմեկնութիւնս քերականին: